

13. Դանիել Վարուժան, Ցեղին սիրտը: - Բագինին վրայ: - Կրկեսին մէջ: - Դիւցազնավէպեր (1906-1909), Մատենաշար «Ազդակ», թիւ 3: Հրատ. Արծիւ ժող. գրավաճառանոցի, Կ. Պոլիս, տպագր. Օնիկ Արզումանի, 1909, 249 էջ (Շապիկի վրա գրված է 1910):
14. Ժողովածուի տիտղոսաթերթին նշված է 1912, բայց իրականում գիրքը ընթերցողին է հասել 1913 թվականի սկզբին:
15. Տե՛ս 6-րդ ծանոթագրությունը:
16. «Հացին երգը» ժողովածուի մի շարք բանաստեղծություններ այդ շրջանում լույս են տեսել մամուլում: Ժողովածուն լույս տեսավ 1921 թ.: Դանիել Վարուժան, Հացին երգը [Բանաստեղծություններ]: Հրատարակություն «Նաուասարդ» Միություն. - Կ. Պոլիս, Տպագր. Օ. Արզումանի, 1921, 95 էջ:
17. Լկոնտ դը Լիլի առաջնորդած գրական խմբակը կոչվում էր «Պառնաս» («Parnasse»), իսկ անդամները՝ «պառնասականներ»:
18. Ըստ ամենայնի, բանախոսը խառնել, ավելի ճիշտ՝ սինթեզել է Վերհառնի երկու տարբեր ժողովածուների վերնագրերը: «Les forces tentaculaires» վերնագրով ժողովածու կամ բանաստեղծություն Վերհառնը չունի: Փոխարենն ունի «Les villes tentaculaires» (1895, «Հրեշ քաղաքներ») և «Les forces tumultueuses» (1902, «Կատաղի ուժեր») վերնագրված ժողովածուներ:
19. Պետրոս Դուրյանի «Տրտունջք» բանաստեղծության առաջին տողն է:
20. Վարուժանի «Լույսը» բանաստեղծության առաջին տողն է:
21. Խոսքը «ALL'ITALIA» բանաստեղծության մասին է, որը Լեոպարդին գրել է 1818 թ. և ընդգրկել իր հանրահայտ «Երգեր» (Canti) ժողովածուում, որ լույս տեսավ 1831 թ.:
22. Նկատի ունի Շիրվանզադեի «Ահա մի ուրիշը» հոդվածը, տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, թիվ 121, ինչպես նաև Շիրվանզադե, «Երկերի ժողովածու», հատոր 10, Երևան, 1962, էջ 475-476:
23. Վերնագիրն ակնհայտորեն սխալ է նշվում, պետք է լինի «...Օրինեալ ես դու ի կանայս»:
24. Նկատի ունի Կոմիտասին:
25. Կրակի, դարբնության, կոմանն ու ձուլմանը կապված արհեստների աստվածը հին հունական առասպելաբանության մէջ:
26. Նկատի ունի «Իլիականի» Արսեն Բագրատունու թարգմանությունը: Տե՛ս Իլիական: Հուն. ի հայ Հ. Արսէն Կոմիտաս Բագրատունի, ի Մխիթ. միաբան.: Վենետիկ, տպ. Ս. Ղազար, 1864, 455 էջ: Նաև՝ Իլիական: Հուն. ի հայ Հ. Արսէն Կոմիտաս Բագրատունի, ի Մխիթ.: 2-րդ տպագր.: Վենետիկ, տպ. Ս. Ղազար, 1893, 454 էջ: